ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011թ. N____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Ա. Քոչինյան փողոցի հ.2/1 շենքի հ.26՝ 10.7քմ ընդհանուր մակերեսով սենյակը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.06.2011թ. հ.2471809 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պետրոս Գյուրջինյանին, Լավուրա Մանուչարյանին, Հերմինե Գյուրջինյանին, Հովսեփ Գյուրջինյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նոր Նորք վարչական շրջանի Ջրվեժի <<Բանավան>> թաղամասի հ.1 հանրակացարանի հ.225՝ 38.0քմ ընդհանուր մակերեսով երկու սենյակները Նոր Նորքի թաղապետի 09.07.2004թ. հ.199 որոշումով հատկացվել է Պետրոս Գյուրջինյանի ընտանիքին (օրդեր հ.147)։

Նշված հասցեի երկու սենյակներից մեկ սենյակը՝ 28.01քմ ընդհանուր մակերեսով, Նոր Նորք համայնքի ավագանու 20.02.2009թ. թիվ 10 որոշումով օտարվել է Պ.Գյուրջինյանի ընտանիքին (04.05.2009թ. անշարժ գույքի նվիրաբերության պայմանագիր), և քանի որ մյուս՝ 10.7քմ ընդհանուր մակերեսով սենյակի նկատմամբ 2009թ.-ին դեռևս Երևան համայնքի անվամբ պետական գրանցում կատարված չի եղել, մասնավորեցումը 2-րդ սենյակի նկատմամբ միաժամանակ չի իրականացվել։

08.06.2011թ.-ին Ա.Քոչինյան փողոցի հ.2/1 շենքի հ.26՝ 10.7քմ ընդհանուր մակերեսով սենյակը Երևան համայնքի անվամբ ստացել է պետական գրանցում՝ Ա.Քոչինյանի փողոց հ.2/1 շենք հ.26 հասցեով (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.06.2011թ. հ.2471809 վկայական)։

Պետրոս Գյուրջինյանն ընտանիքի հինգ անձով մշտական հաշվառված բնակվում է երկու սենյակներում։

Ելնելով վերոգրյալից «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ